ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-ԻՑ ՄԻՆՉԵՎ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-Ը ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ (Ք. ՖՈՒՃՈՈՒ) ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

Դավիթ Թունանյան - ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական:

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (ք. Ֆուճոու) 2025թ. հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ը:

3. **Հրավիրող կողմը՝**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն:

4. **Գործուղման նպատակը՝**

Մասնակցություն Չինաստանի Ժողովրդական Հանրապետության կառավարության կողմից կազմակերպվող մարդկային ռեսուրսների զարգացման ոլորտում երկկողմ համագործակցության նախագծերի իրականացման նպատակով հատկացվող աջակցության շրջանակներում ՉԺՀ Ֆուծյեն նահանգի Միջազգային տնտեսական համագործակցության կենտրոնի նախաձեռնությամբ 2025 թվականի հոկտեմբերի 27-ից նոյեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում Ֆուճոու քաղաքում «Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների համար տարածաշրջանային տնտեսության զարգացում» խորագրով դասընթացին:

5. **Քննարկված թեմաները**

Գործուղման ընթացքում Ֆուծիան նահանգի արտաքին տնտեսական համագործակցության կենտրոնի համապատասխան դասախոսների և ծրագրի ղեկավարների ու պատասխանատուների կողմից ներկայացվել են Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նախագահ, Չինաստանի կոմունիստական կուսակցության գլխավոր

քարտուղար Սի Ցզինպինի տնտեսական մտքերը, տնտեսական զարգացման հեռանկարները, տեղում կազմակերպվել թեմատիկ այցելություններ:

6. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝</u>

Հանդիպմանը մասնակցում էին ՀՀ ՏԿԵ նախարարության, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ մարզպետների աշխատակազմերի ներկայացուցիչները: Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ հետևյալ թեմաներով՝

- Չինաստանի տնտեսական զարգացման,
- Ֆուծիան նահանգի օրինակով «Մեկ գոտի, մեկ ուղի» համագործակցության,
- Թվային էկոնոմիկայի զարգացման,
- Միջազգային ներդրումների կառավարման,
- Ազգային կամ տեղական մակարդակներում մրցունակության բարձրացման ռազմավարության,
- Նորարարական զարգացման բնագավառում տեղական մարմինների մասնակցության և այլ թեմաներ:

Ֆուճոու և Գուանչո քաղաքներում կազմակերպվեցին այցելություններ տարբեր բիզնես կենտրոններ, թանգարաններ, թեյի բնօրրան Լյանցիո գյուղ, ինչը հնարավորություն ընձեռեց ծանոթանալու ժասմին թեյի պատրաստման եղանակին:

Ստորագրություն, ամսաթիվ **17.11.2025թ.**